https://doi.org/10.46991/hc.2023.20.2.008

The Political Perception of Time in 11-13 Century Armenian Epigraphy and Manuscript Colophons

Areg Vardanyan
https://orcid.org/0009-0002-8862-8590
Ph.D student, Yerevan State Univesity
vardanyanareg1@yahoo.com

Key Words՝ Political Thinking in Medieval Armenia, The Idea of Time, Epigrpahy, Manuscript Colophons, Kingship (T'agavorowtiwn), Rulership (P'aronowtiwn), Imperial power (Ashkharhakalowtiwn), Armenian Kingdom of Cilicia, Ilkhanate, Byzantium.

The article focuses on temporal-political formulae of manuscript colophons and inscripions from 11-13th century Armenia, a widely used textual component to refer to the rulers of the time. As a multiplicity of titles and designations were employed to denote rulers of various "standings", a special attention is given to the terminological peculiarities in terms of semantics as well the context and the scope. Those include imperial power (ashkharhakalowtiwn), tyrannical power (br'nakalowtiwn), and anarchy (anishkhanowtiw) among others. An important aspect of the formulae is the temporal subordination of reference (with the more powerful rulers being named first and the least powerful ones last). One further aspect is the marked difference in the perception between kingly and non-kingly powers in Medieval Armenia.

Ժամանակի քաղաքական ընկալումը 11-13-րդ դարերի հայոց վիմագրերում և հիշատակարաններում

Արեգ Վարդանյան
Ասպիրանտ, ԵՊՀ

Հիմնաբառեր՝ Միջնադարյան Հայաստանի քաղաքական մտածողությունը, ժամանակի գաղափարը, վիմագրագիտություն, ձեռագրերի հիշատակարաններ, թագավորություն, պարոնություն, աշխարահակալություն, Կիլիկյան Հայաստան, Իլխանություն, Բյուզանդիա:

Հոդվածում ներկայացվում է հայերեն ձեռագրերի եւ վիմագրերի ժամանակի քաղաքական բանաձևերի վերլուծություն՝ 11-13-րդ դարի սկզբնաղբյուրների հիմքի վրա: Քննության են առնվում տարատեսակ բանձներում օգտագործվող եզրույթները, դրանց նշանակությունը եւ համատեքստը,

History and Culture, Vol.-2(20), 2023, pp. 8-17.
Received: 16.05.2023
Revised: 12.11.2023
Accepted: 15.12.2023

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.
© The Author(s) 2023

օգտագործման դաշտը (պատմական անձինք ում հղում է տվյալ բանաձևը և նրանց հասարակա-քաղաքական դիրքը): Մատնացույց է արվում այն հանգամանքը, որ միջնադարյան Հայաստանում հստակ տարբերություն է դրվել թագավորական եւ ոչ թագավորական իշխանությունների միջև, գիտակցվել է աշխարհակալության՝ իբրև «աշխարհաքաղաքական» միավորի գաղափարը, նշանակություն է տրվել իշխանության արդարացի եւ ոչ արդարացի դրսեւորումներին (բռնակալություն): Եզրակացվում է, որ ժամանակի տարատեսակ զգացումների կողքին, գոյություն է ունեցել նաև վերջինիս քաղաքական զգացումը:

Политическое восприятие времени в армянской эпиграфике и ишатакаранах 11-13 веков

Арег Варданян
Аспирант, Ереванский государственный университет.

Ключевые слова: политическое мышление в средневековой Армении, идея времени, эпиграфика, ишатакараны (памятные записи рукописей), царская власть (тагаворутюн), властвование (паронутюн), имперская власть (ашхарhакалутюн), Киликийское армянское государство, Ильханство, Византия.

В статье рассматриваются формулы для обозначения «политического» времени в ишатакаранах и эпиграфических памятниках Армении 11-13 веков. Так как в связи со статусом того или иного правителя используются разные титулы, особое отмечаются семантические и контекстуальные аспекты ииспользованных терминов. Среди них можно выделить имперскую власть (ашхарhакалутюн), тиранию (брнакалутюн), и анархию (анишханутюн). Важным аспектом исследования этих формул есть явление временной субординации упоминания (когда правители стоящие выше в иерархии упоминаются первыми, тогда когда стоящие ниже упоминаются последними). Стоит также особо отметить четко выделенную разницу между царскими и не-царскими формами власти в средневековой Армении.

* * *

Ներածություն[1]**:** Միջնադարյան Հայաստանի պատմության մի շարք կողմերի լուսաբանման համար կենտրոնական դեր ունեն մեզ հասած բազում վիմագրերն ու հիշատակարանները: Սրանք կարևոր դեր ունեն տնտեսական պատմության [Ավդալբեգյան, 1927; Մանանդյան 1977, 160-162, 182-183, 277, 281, 288, 293-296:], պատմական ժողովրդագրության [Մալխասյան 2020], տոհմաբանության [Մարգարյան, 1996; Յովսէփեան 1969; Rüdt-Collenberg, 1963] և այլ բազում հարցերի ուսումնասիրման տեսանկյունից: Չնայած այն հանգամանքին, որ թե՛ վիմագրությունը և թե՛ հիշատակարանագրությունը բազմակողմանի վերլուծվել [Ավագյան 1973; Ավագյան 1978; Հարությունյան, 1975, 40-100] և վերլուծվում են [Հարությունյան 2019; Հարությունյան 2022], ժամանակի քաղաքական որակման բանաձևերը չեն դարձել հատուկ հետազոտության առարկա[2]: Խոսքը վերաբերում է վիմագրական և հիշատակարանային նյութից հայտնի *ի թագաւորութեան*,

[1] Շնորհակալություն ենք հայտնում պ.գ.թ. Միքայել Մալխասյանին հոդվածը կարդալու և շահեկան դիտարկումներ կատարելու համար:
[2] Հաճելի բացառություն է Լևոն Տեր-Պետրոսյանի «Խաչակիրները և հայերը» մենագրությունը, որտեղ արված դիտարկումներին կանդրադառնանք հոդվածի համապատասխան մասում:

յիշխանության և նմանատիպ այլ բանաձևերին: Այդպիսի բանաձևերի համալիր քննությունը, կարծում ենք, կարող է որոշակի նպաստ բերել միջնադարյան Հայաստանում քաղաքական մտածողության ուսումնասիրության համար:

Բանաձև 1. ***Ի թագաւորութեան***

Այս բանաձևը, թերևս, ամենատարածվածներից է, և որպես թագավորական իշխանության յուրօրինակ հաստատում է ներկայանում: Այն նախ և առաջ կիրառվում է հայոց թագավորների գահակալումը բնութագրելու համար [Դիվ. X, 22, 34, 88; Հիշ. Ե-ԺԲ, էջ 73, 75, 305, Հիշ. ԺԳ, 12, 60, 190] : Նույն բանաձևի կիրառմանը կարելի է հանդիպել նաև մոնղոլ խաների [Հիշ. ԺԳ, 661; Դիվ. III, 74; Դիվ. IV 247, 328], բյուզանդական կայսրերի [Հիշ. Ե-ԺԲ, 109, 142, 182] և վրաց թագավորների [Հիշ. Ե-ԺԲ, 208; Դիվ. III, 127; Դիվ. VI, 10, 34, 71, 127; Դիվ. IX, 369] կապակցությամբ: Որոշ դեպքերում այն կիրառվում է հայոց «փոքր» թագավորների [Դիվ. V, 173; հիշատակված Գագիկ Մուսեի որդու մասին ավելի մանրամասն տե՛ս Ուլուբաբյան 1975, 62-63; Бархударян, 2011, 53-55; Յակոբեան, 2020, 242 և հետ.; Դիվ. II, 19, 45; հիշատակված տիրակալների մասին տե՛ս Գրիգորյան, 2006], ինչպես նաև Անիի Շաղդադյան Փատլուն [Դիվ. I, 2] [1] ամիրայի համար:

Բանաձև 2. ***Յիշխանութեան***

Այս բանաձևն օգտագործվում է, որպես կանոն, ազդեցիկ իշխանական տների ներկայացուցիչներին հիշատակելու համար, ինչպիսիք են Լամբրոնի Հեթումյան իշխանները [Հիշ. Ե-ԺԲ, 221, 231, 288; Գրիգոր Տղա, 1972, 228], Կիլիկյան հայոց իշխանները [Հիշ. Ե-ԺԲ, 261], Զաքարյանները [Հիշ. ԺԳ, 182; Դիվ. IV, էջ 109, 382; Դիվ. VI, 52; Դիվ. VI, 15], Խաղբակյանները [Հիշ. ԺԳ, 558, 676; Դիվ. IV, 150; Դիվ. III, 181;], Օրբելյանները [Հիշ. ԺԳ, 515; Դիվ. IV, 126; Դիվ. III, 113;], Հասան Ջալալյանները [Դիվ. V, 51, 52, 72, 85, 114, 140], Մահկանաբերդցիները [Դիվ. IV, 13; Դիվ. VI, 112, 210, 211, 213; Դիվ. IX, 243; Քալանթար, 2007, 62] և այլն: Այս բանաձևն օգտագործվում է նաև Կիլիկյան արքայատոհմի՝ թագավորի տիտղոս չկրող անդամների համար, ինչպիսիք են Հեթում արքայի հայր Կոստանդին իշխանը [Հիշ. ԺԳ, 175, 201, 229] կամ նրա որդին՝ ապագա Լևոն Գ արքան [Նույն տեղում, 380, 381] : Նույն բանաձևին ենք հանդիպում նաև ավելի համեստ քաղաքական դեր ունեցող ընտանիքների համար, ինչպիսիք են՝ Խարբերդի Ղավրասները [Նույն տեղում, 421, 834-835][2], Դսեղի Մամիկոնյանները [Դիվ. IX, 411], Համուս բերդի տեր Վահրամը [Հիշ. ԺԳ, 115][3] և այլն:

Բանաձև 3. ***Ի տէրութեան***

Այս բանաձևն ունի օգտագործման համեմատաբար ավելի լայն շրջանակ. այն մի կողմից կիրառվում է Ատրպատականի աթաբեկ Ելտկուզի [Հիշ. Ե-ԺԲ, 213], Զաքարյանների [Հիշ. ԺԳ, 140; Դիվ. VI, 10; Դիվ. I, 2, 4, 5, 7; Դիվ. IV, 93], Օրբելյանների [Հիշ. ԺԳ, 559], Խաղբակյանների [Դիվ. III, 180], Մահկանաբերդցիների [Դիվ. IX, 180 204, 209] պես ազդեցիկ իշխանական տների ներկայացուցիչների համար, մյուս կողմից այն կարող է կիրառվել ավելի համեստ տիրույթներում իշխող Վիգեն Թոռնիկյանի դեպքում [Հիշ. Ե-ԺԲ, 192], կամ ընդհանրապես Խաղբակյանների տիրույթներից մեկում տեղական նշանակություն ունեցող պարոն Դավթի դեպքում [Հիշ. Ե-ԺԲ, 558] : Այս եզրույթով է բնութագրվում նաև Թամար թագուհու և նրա որդի Լաշա Գիորգիի կառավարումը Հովհաննավանքի մի անթվագիր վիմագրում, որտեղ կարդում ենք «*ի տերութեան*

---

[1] Հետաքրքրական է, որ Փատլունի նախնիներից, Մանուչեին վերաբերող արձանագրության մեջ օգտագործվում է «*Ի պարոնութեան*» բանձևը, տե՛ս [Գասպարյան, 2008, 52]:

[2] Ղավրասների այս ճյուղի մասին տե՛ս [Бартикян, 1988, 163-169]:

[3] Այս իշխանական ընտանիքի մասին ավելի մանրամասն տե՛ս [Ալիշան, 1885, 206]:

պար[ոն] Դդուփալ[1] *Թամարին, իր թագավորայզարն որդի մեծն Մլքիսէդեկին Գաւրգէ…*» [Ղաֆադարյան 1948, 100]: Հովհաննավանքի 1200թ. մեկ այլ արձանագրության մեջ Թամարը հիշատակվում է ավելի գործածական՝ *ի թագավորութեան* բանաձևով [Նույն տեղում, 76]:

Բանաձև 4. ***Ի պարոնութեան***

Ինչպես նախորդ բանաձևը, սա նույնպես ունի կիրառման համեմատաբար լայն շրջանակ: Այն կիրառվում է խոշոր իշխանական տների համար, ինչպիսիք են Զաքարյանները [Հարությունյան 2016, 267], Օրբելյանները [Հիշ. ԺԳ, 784], Մահկանաբերդցիները [Նույն տեղում, 496], Խաղբակյանները [Նույն տեղում, 253], Դոփյանները [Դիվ. V, 218]: Այն օգտագործվում է նաև Ումեկյանների վաճառական-իշխանական ընտանիքի համար [Դիվ. VI, 104], ինչպես նաև տեղական նշանակության տիրակալների համար [Հիշ. ԺԳ, 786; Դիվ. V, 102 Դիվ. IX, 264] :
Այս բանաձևն ունի մեկ այլ, բավականին առանձնահատուկ կիրառություն Կիլիկիայում: Այսպես, հիշատակարաններից մեկում [Հիշ. ԺԳ, 320] այս բանաձևն օգտագործվում է Հեթում Ա-ի որդի, ապագա Լևոն Գ-ի համար, իսկ մեկ այլ հիշատակարանում կարդում ենք՝ «*ի թագաւորութեան բարեպաշտ արքային Հեթմոյ, և յիշխանութեան որդոյ իւրոյ Լևոնի, այն ինչ, նորընծա ի պարոնութիւն.*» [Նույն տեղում, 380]: Մինչև իր օծումը գրված ևս երկու հիշատակարանում ապագա Լևոն Գ-ն հիշատակվում է այս բանաձևով: Հարց է ծագում՝ արդյոք այս բանաձևը կիրառելու հատուկ պատճառ կա՞: Կարծում ենք, վերը բերված հիշատակարանից պարզ է, որ խոսքը հասարակական դիրքի որոշակի փոփոխության մասին է, քանի որ 1269թ. Լևոնը «իշխանի» դիրքից նորից գալիս է «պարոնության», ինչպես 1263թ. էր: Սա բնականաբար կապված է 1268թ. վերջինիս գերությունից վերադարձի հանգամանքով [Տեր-Պետրոսյան, 2007, 315]: Այն, որ 1269թ.ևս երկու հիշատակարանում [Հիշ. ԺԳ, 374, 381] Լևոն Գ-ն հիշատակվում է *յիշխանութեան* բանաձևով, կարող է պայմանավորված լինել այն հանգամանքով, որ այդ ձեռագրերը գրված լինեն մայիս ամսից առաջ՝ մինչև Լևոնի «պարոնության» գալը: Այսպիսով՝ կարծում ենք, որ քննության առարկա բանաձևն իր այս իմաստով արտահայտում է թագաժառանգի կամ գահի իրավական հավակնորդի քաղաքական հաստատությունը: Սրանով է բացատվում նաև Հեթում արքայորդու ճաշոցի հիշատակարանի հետևյալ տեղեկությունը. «*Եւ իսկոյն հայր նորա* (իմա՛-Հեթում Ա) *և ամենայն աշխարհն եդին զնա* (իմա՛-Լևոն Գ) *յաթոռ պարոնութեան, քանզի ոչ առ յանձն լինել թագաւոր յաւուրս հաւր իւրոյ.*» [Նույն տեղում, 588] : Ի դեպ, մեր կարծիքը հիմնավորվում է նաև այն հանգամանքով, որ, որոշ դեպքերում, այս բանաձևով [Նույն տեղում, 703, 742] է հիշատակվում նաև Հեթում Բ-ն, որ անսովոր հոգեկան ծանրությամբ էր տանում արքայական իշխանությունը [Նույն տեղում, 744, 788] : Այս խնդրի արթիվ մեզ հայտնի միակ կարծիքը Լ. Տեր-Պետրոսյանինն է, ով կարծում է, որ Լևոն Գ-ի դեպքում «պարոնություն» և «իշխանություն» արտահայտությունները «թագավորի անունից երկիրը կառավարելու» [Տեր-Պետրոսյան, 2007, 316] հանգամանքի ցուցիչ են, Թորոսի դեպքում՝ Կոստանդին արքայահոր նման «ավագ պարոնի» կամ «խնամակալի» պաշտոնով կառավարողի նշանակություն ունեն, իսկ Հեթում Բ-ի դեպքում՝ թագադրված չլինելու հանգամանքով է պայմանավորված: Քանզի մեր կարծիքը, մեծ հաշվով, չի հակասում Լ. Տեր-Պետրոսյանի նկատած փաստերին, այլ թերևս ընդհանրացնում է դրանք. կավելացնենք միայն, որ խնդրի ավելի խորը մշակումը կարող է մեր առաջ բացել Կիլիկյան Հայաստանի մի նոր քաղաքական հաստատություն, այն է՝ թագաժառանգի կամ գահի իրավական հավակնորդի հաստատությունը, որին Կիլիկյան Հայաստանի քաղաքական հաստատությունների ուսումնասիրողները դեռ չեն առանձնացրել [Բոռնազյան, 1973, 45-79; Սուքիասյան, 1978, 152-170, 242-268; Mutafian, 2012, 410-441]:

Բանաձև 5. ***Ի տիեզերակալութեան, Յաշխարհակալութեան***

[1] ԴԴՈՒՓԱԼՈ(=*դեդուփալի*) բառն է, որ գրաբարում համապատասխանում է *դշխոյ*-ին, տե՛ս Մաթ. 12:42:

Հայտնի է, որ *տիեզերակալ* և *աշարհակալ* բառերը հոմանիշներ են: *Աշխարհակալ* բառը համարժեք է հունարեն *κοσμοκράτωρ* բառին: Սա հստակ երևում է Պողոս առաքյալի «Առ Եփեսացիս» թղթից և Գրիգոր Նազիանզացու «Յաղագս աղքատութեան» ճառից, որտեղ *κοσμοκράτωρ* բառի գրաբարյան համարժեքն է *աշխարհակալը*:

Եփես.6:12		Նազիանզացի «Յաղագս աղքատութեան» (գլ. 21)[1]	
…ἀλλὰ πρὸς τὰς ἀρχάς, πρὸς τὰς ἐξουσίας, πρὸς τοὺς κοσμοκράτορας τοῦ σκότους τούτου…	…այլ ընդ իշխանութիւնս եւ ընդ պետութիւնս եւ ընդ աշխարհակալս խաւարիս այսորիկ…	…τίς ἰλὺν βυθοῦ καὶ ἁγίαν γῆν ; τίς σάρκα καὶ πνεῦμα; τίς Θεὸν καὶ κοσμοκράτορα;	…nՋ զտիղմ խորոցս եւ զսուրբ երկիրն, nՋ զմարմին և զհոգի, nՋ զԱստուած և զաշխարհակալս…

Այն, որ *տիեզերակալ* բառը *κοσμοκράτωρ-ի մեկ այլ* համարժեք է, ակներև է 10-րդ դարի հայ և լատին աղբյուրների համադրումից: 10-րդ դարի մի հիշատակարանում Բյուզանդիայի կայսրը հորջորջվում է իբրև *տիեզերակալ* [Եղիազարյան, 2021, 27], իսկ լատին հեղինակ Լյուտպրանդը նույնացնում է կայսր (*imperator*) և տիեզերակալ (*kosmocrator*) տիտղոսները [Sutherland, 1975, 79]: Այս իմաստով է այն օգտագործում Գրիգոր Մագիստրոսը [Գրիգոր Մագիստրոս 2012ա, 195]: Իբրև բյուզանդական կայսեր տիտղոս՝ *κοσμοκράτωρ* բառը հանդիպում է նաև Կոմնենոսյան շրջանում [Zagklas 2019, 237; Ahrweiler, 1975, 88]: Մյուս կողմից հարկ է նշել, որ 11-րդ դարավերջի մատենագիր Հովհան Օքսեցու ճառերում այս բառն օգտագործվում է Պողոս առաքյալին և Գրիգոր Նազիանզացուն մոտ իմաստով՝ աշխարհիկ իշխանություն կրողին բացասական երանգավորմամբ մատնանշելու համար [Gautier, 1964, 148-149, 152, 155] : Ավելացնենք, որ բանասիրությանը վաղուց հայտնի է «տիեզերակալ» եզրույթի յուրահատուկ հայկական մի իմաստ՝ իբրև Բագրատունյաց արքաների տիտղոս [Մարգարյան 2005]: Ամեն դեպքում, քանզի այս եզրույթի մանրակրկիտ բառաքննությունը շատ կշեռի բուն հոդվածի նյութից, բավարարվենք այսքանով: Հարկ է նշել, որ վիմագիր և հիշատակարանային աղբյուրներում այս եզրույթը հանդես է գալիս իր քաղաքական իմաստով, ինչը հստակ ցույց է տալիս դրա հաճախակի կիրառությունը մոնղոլական խաների առնչությամբ [Հիշ. ԺԳ, 435, 462, 508, 557, 598, 668, 784, 829; Դիվ. VI, 112; Դիվ. V, 102; Դիվ. IV, 71, 267, 253, 317; Ղաֆադարյան, 1975, 195][2]: Այսպիսով՝ բանաձևը ենթադրում է թագավորական իշխանությունից ավելի բարձր մի իշխանություն, որ արդի բառապաշարում համարժեք է «գերտերություն» բառին: Այս հանգամանքի վրա ուշադրություն է դարձրել նաև Լ. Տեր-Պետրոսյանը՝ նկատելով մեր պատմիչների կողմից բառիս կիրառությունը խալիֆայության կապակցությամբ [Տեր-Պետրոսյան, 2007, 18]:

Կարևոր է արձանագրել, որ այս բանաձևն ունի մեկ այլ կիրառություն, որ գալիս է *աշխարհակալութիւն* բառի այլ իմաստից, որ հոմանիշ է «կողմնակալ, կուսակալ» բառերին: Սրանով է բացատրվում դրա կիրառությունը Զաքարյան իշխանների համար [Դիվ. III,, 78, 88; Դիվ.

[1] Հունարեն բնագրի համար տե՛ս [Gregorius Theologus 1857, 884)] գրաբարյան թարգմանության համար տե՛ս [Մուրադյան 1992, 114.], տե՛ս նաև [Մուրադյան, 1983, 76]:

[2] 1264թ. մի վիմագրում տրվում է իլխանների ընդհանուր իշխանությունը՝ «*Աշխարհակալութեան այլղանացն*» [Գասպարյան, 1993, 134]: Ախթամարի մեկ այլ վիմագրում Ապաղայի կապակցությամբ կա այսպիսի բանաձև «*Յաշխարհակալ թագավորութեն*» [Թումանեան, Յակոբեան, 2022, 100]

IV, 18], որոնց տիրապետությունը կայսերական ծավալների չէր հասնում: Այս տեսանկյունից նման իմաստ է արտահայտում նաև *Ի կողմնակալութեան* բանաձևը, որ կիրառվել է Քուրդ Վաչուտյանի վերաբերյալ Հովհաննավանքի մի վիմագրում [Ղաֆադարյան 1948, 91]: Առանձնակի ուշադրություն է պահանջում Բջնիի վանքի մի արձանագրություն, որտեղ կարդում ենք. «*Յաշխարհակալութեան քաջաց եւ յաղթողաց շահնշահաց Զաքարէի եւ Իւանէի*» [Սարգսյան 1977, 103]: Հաշվի առնելով արտահայտված ներբողական ոճը և ժամանակակիցների ընդհանուր հակումը դեպի Զաքարեի և Իվանեի մեծարումը, ինչպես նաև նրանց արտահայտիչ ռազմական հաջողությունները, կարելի է ենթադրել, որ այստեղ բանաձևը կիրառված լինի իբրև չափազանցություն՝ «գերտերության» իմաստով:

Բանաձև 6. ***Ի բռնակալութեան***

Այս բանաձևով հիշատակվում են մահմեդական տիրակալները կամ առհասարակ մահմեդականները [Հիշ. Ե-ԺԲ, 153, 166, 237. 254; Հիշ. ԺԳ, էջ 208], մոնղոլ տիրակալները կամ առհասարակ մոնղոլները [Հիշ. ԺԳ, էջ 350, 496, 515, 666, 810], ինչպես նաև Եդեսիայի կոմս Ճոսլինը [Հիշ. Ե-ԺԲ, 158; հմմ. Dowsett, 1971, 200]: Ակներև է, որ եթե նախորդ բանաձևերը մատնանշում են տիրակալի իշխանության աստիճանը, ապա այս բանաձևը մատնանշում է իշխանության բնույթը, այն է թե, դրա ապօրինությունը, ոչ իրավաչափ բնույթը: Սրանով է պայմանավորված մահմեդական և մոնղոլ տիրակալների նկատմամբ բանաձևի մերթ կիրառումը, քանզի միջնադարում նրանց իշխանության ներքո հայությունը հաճախ ենթակա էր դաժան հարկահանության և ստորակա իրավակարգավիճակի:

Բանաձև 7. ***Յանիշխանության***

Այս բանաձևը մեզ հանդիպել է երկու անգամ 12-րդ դարավերջի հիշատակարաններում [Հիշ. Ե-ԺԲ, 240, 243]: Երկու դեպքում էլ խոսքը հայության շրջանում թագավորական իշխանության բացակայությանն է վերաբերում: Այս բանաձևը, ինչպես իր նախորդը, իշխանության բնույթի մասին է: Այստեղ արձանագրվում է կենտրոնաձիգ իշխանության իսպառ բացակայությունը, ինչը բավականաչափ ցավոտ թեմա էր միջնադարյան հայ մտավոր դասի համար: Կա նաև բանաձևի մեկ այլ հիշատակում, ինչի մասին կխոսենք ստորև:

Բանաձև 8.Յուրահատուկ տիտղոսներ արտահայտող բանաձևեր

Որոշ վիմագրերի և հիշատակարանների բանաձևերում հանդիպում են հայոց և օտար տիտղոսների հղումներ: Դրանց շրջանում կարելի է առանձնացնել բյուզանդական կայսրերի *ինքնակալ* տիտղոսը, որ օգտագործվել է թե՛ բյուզանդական կայսեր համար և թե՛ խաչակրաց արշավանքի առաջին շրջանի համար[1], ինչպես նաև Բագրատունյաց շրջանում շատ տարածված *կիւրոպաղատ* տիտղոսը [Հիշ. Ե-ԺԲ, 109]: Մոնղոլական շրջանի տիտղոսներից հանդիպում են *դանը* [Դիվ. VI, 127; Սարգսյան, 1957, 58] և *փաթշահը* (Մաթևոսյան, 1987, 61): Մահմեդական տիտղոսներից և պաշտոններից հիշատակվում են *սուլթանը* [Հիշ. ԺԳ, 85], *ամիրպետը* [Դիվ. I, 47][2] և *դատավորը* (Հիշ. Ե-ԺԲ, 181)[3]: Ծագումով իսլամական, սակայն 12-13-րդ դարերի Հայաստանում և

[1] Նույն տեղում, էջ 104, 120: Այն, որ *ինքնակալը* համապատասխանում է *αὐτοκράτωρ*-ին հստակ երևում է Սոկրատեսի «Եկեղեցական պատմությունից»: Հարկ է նշել, որ չնայած ոչ բառացի թարգմանությանը, տիտղոսը պահված է:

Սոկրատայ Սքոլաստիկոս 1897, 8-9 (գլ. Դ)	Socrates Scholasticus 1864, 41
Եւ Կոստանդիանոս միահամուռն թագաւորեալ **ինքնակալ** թագաւոր կոչեցաւ…	Κωνσταντίνος τοίνυν πάντων των γενόμενος ἐγκραὴς **αὐτοκράτωρ** τε βασιλεὺς αναδειχθεὶς…

[2] Հավանաբար խոսքը *أمير الأمراء* (= ամիրների ամիր), տիտղոսի մասին է, որ որոշակի տարածում ուներ նաև հետ-սելջուկյան շրջանում, տե՛ս [Bosworth, Savory]

[3] Հավանաբար խոսքը *قاضي* (=*դատի՝* իսլամական իրավունքի դատավոր) մասին է, քանի որ դատավորն ընդհանրապես առանձնապես կարևոր դեր չուներ 11-13-րդ դարի Հայաստանում, իսկ դատական լայն գործառույթներ կարող էին ունենալ թե՛ աշխարհիկ և թե՛ հոգևոր իշխանավորները:

Վրաստանում սեփական դարձած («*տուք պատիւ անուանց՝ ամիրա և հեճուպ և մարզպան և սպայասալար , և այսպիսիս. և մի սիր և պրոքսիմոս , գունդուստապլ և մարաջախտ և ձիաւոր և լեճ, որ Լատինացւոց է օրէն*», [Ներսես Լամբրոնացի, 1865, 240] հմմ. «*Իսկ մեր ի պարսից բազում ինչ ընտանեաբար ուսեալ զգեստս, որպէս դուռա եւ ռիդե…եւ այլք այսպիսի բազում, որ գրեթէ հասարակորդ լեզուիս մերոյ*», [Գրիգոր Մագիստրոս, 2012բ, 399]) պաշտոններ *ամիրսպասալարը* (նաև դրա բուն հայկական՝ *սպարապետը* տարբերակը) [Դիվ. IX, 36, 37, 114, 247, 319; Հիշ. ԺԳ, 71, 112], *աթաբեկը* [Հիշ. ԺԳ, 435] և *ամիրան* [Դիվ. I, 6; Դիվ. IX, 36] նույնպես հիշատակվում են իրենց բանաձևով։

Եզրափակիչ դիտարկումներ

Մինչև եզրափակիչ դիտարկումներին անցնելը նշենք, որ աղբյուրներում հանդիպում են եզակի և առավելապես գրական վարժանք հիշեցնող բանաձևեր, ինչպիսիք են *իշխանակալութիւն* [Հիշ. ԺԳ, 426], *վերադիտութիւն* [Նույն տեղում, 483], *վերակացութիւն* [Dowsett, 1971, 200] և այլն, որոնց հատուկ անդրադարձ չենք կատարի սույն հոդվածի շրջանակներում։ Հարկ է նշել նաև, որ հաճախ հանդիպում են բարդ կառուցվածքով հիշատակարաններ և վիմագրեր, որտեղ նշվում են մի քանի տիրակալներ։ Որպես կանոն՝ նրանք նշվում են նվազման կարգով՝ սկզբից ավելի հզորները, ապա ավելի թույլերը։ Այս սկզբունքի բազում օրինակներից է 1298թ. Անիի Ավետարանի հիշատակարանը, ուր կարդում ենք՝ «*յաշխարհակալութեան էլդան Ղազանին, ի թագաւորութեան Հայոց Սմբատա, … ի Վրաց թագաւորութեան Վաղթանգին, ի պարոնութեան ամիրսպասալար Շահնշահի … ի տէրութեան Արջևառնո Մագիստրոսեանց…*» [Հիշ. ԺԳ, 817-818], ինչպես նաև Արտավազավանքի արձանագրությունը, որտեղ կարդում ենք. «*Ի թագաւորութիւն Վրաց Թամարին եւ Լաշային … յիշխանութիւնս հարազատ եղբարաց Զաքարէի եւ Իւանէի, յասպարապետութիան Ամոյր* (իմա՛ Ամիրի — Ա. Վ.) *Բուբային*» [Սարգսյան, 2021, 37]։ Ուշադրության արժանի է նաև 1273թ. մի հիշատակարան, ուր կարդում ենք՝ «*ի տիեզերակալութեան Ապաղա [դա]նին, եւ յանիշխանութիւն մերո աշխարհիս, յաթաբակութեան Սադունին, եւ ի տէրութիւն տեղոյս Ճարին…*» [Հիշ. ԺԳ, 435]։ Այստեղ մենք տեսնում ենք, որ, չնայած չափազանց թուլացած թագավորական իշխանությանը, մոնղոլական տիրապետության շրջանի Վրաստանում հիշատակարանագիրը, ամեն դեպքում, զգում է թագավորական իշխանության անհրաժեշտությունը և յուրահատուկ կերպով հիշեցնում է ընթերցողին այդ կարևոր բացը։ Հարկ է նշել, որ այստեղ նույնպես կան բացառություններ, ինչպես վերոբերված մի հիշատակարան, որտեղ Տարսայիճ Օրբելյանը հիշատակվում է Լևոն Գ արքայից առաջ [Նույն տեղում, 559]։ Եթե համարենք սա ոչ թե գրչական սխալի արդյունք, այլ միտումնավոր մի արարք, ապա սա պետք է դիտարկենք 13-րդ դարի երկրորդ կեսի Օրբելյանների միջավարյում տեղի ունեցող քաղաքական զարգացումների հետ, ինչը սակայն մեկ այլ հրապարակման թեմա է։

Այսպիսով, հիշատակարանների և վիմագրերի քաղաքական բանաձևերի քննությունը ցույց է տալիս, որ միջնադարյան Հայաստանում գոյություն է ունեցել ժամանակի վառ արտահայտված քաղաքական զգացում։ Հասարակությունը տարանջատել է իշխանության իրավական և ոչ իրավական *(բռնակալութիւն)* ձևերը, գնահատվել է գերտերության գաղափարը *(աշխարհակալութիւն, տիեզերկալութիւն)։* Հասկացվել է քաղաքական քաոսի գաղափարը *(անիշխանութիւն)։* Կարևոր է նշել, որ, սրանից զատ, հստակ տարանջատում է դրվել թագավորական և ոչ-թագավորական տիպի իշխանությունների միջև *(իշխանութիւն, պետութիւն, տերութիւն* և այլն), ինչն ինքնին հստակորեն մատնանշում է թագավորի՝ իբրև քաղաքական հաստատության և քաղաքական գաղափարի ավելի խորամուռ ուսումնասիրությունը միջնադարյան Հայաստանի համատեքստում։

Գրականության ցանկ

Ալիշան Ղ. 1885, Սիսուան, Վենետիկ, Ս. Ղազար, 592 էջ:

Ավդալբեկյան Թ. 1927, Մի գաղտնիք հայ վիմական արձանագրությունների մեջ ու նրա նշանակությունը Հայաստանի տնտեսական զարգացման պատմության համար, «Տեղեկագիր ՀԽՍՀ գիտության յեվ արվեստի ինստիտուտի», թ. 2:

Ավագյան Ս. 1973, Վիմական արձանագրությունների հնչյունաբանություն X-XIV դդ., Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարկչություն, 397 էջ:

Ավագյան Ս. 1978, Վիմական արձանագրությունների բառաքննություն, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 360 էջ:

Ավագյան Ս. 1986, Վիմագրական պրպտումներ, Երևան, 247 էջ:

Բոռնազյան Ս. 1973, Սոցիալ-տնտեսական հարաբերությունները Կիլիկյան հայկական պետությունում, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարկչություն, 319 էջ:

Գասպարյան Ռ. 1993, Ուշիի սբ. Սարգիս վանքի վիմագրական արձանագրությունները, «ԼՀԳ», , հ. 1, էջ 130-136:

Գասպարյան Ռ. 2008, Նորահայտ արձանագրություն Ս. Քրիստափոր վանքից, «Էջմիածին», թ. ԺԱ, էջ 42-67:

Գրիգոր Մագիստրոս 2012ա, Թուղթք եւ չափաբերականք, աշխ. Գ. Մուրադյանի «Մատենագիրք հայոց», հ. ԺԶ, Երևան, էջ 85-385:

Գրիգոր Մագիստրոս 2012բ, Մեկնութիւն քերականի, աշխ. Գ. Մուրադյանի, «Մատենագիրք հայոց», հ. ԺԶ, Երևան, էջ 386-484:

Գրիգոր Տղա 1972, Բանաստեղծություններ և պոեմներ, աշխ. Ա. Մնացականյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 452 էջ:

Գրիգորյան Գ. 2006, Սյունիքի թագավորությունը (X-XII դարեր), «ՊԲՀ», թ.2, էջ 134-145:

Դիվ. I – Դիվան հայ վիմագրության, պր. I, աշխ. Հ. Օրբելու, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1966, 137 էջ:

Դիվ. II – Դիվան հայ վիմագրության, պր. II, աշխ. Ս. Բարխուդարյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1960, 142 էջ:

Դիվ. III – Դիվան հայ վիմագրության, պր. III, աշխ. Ս. Բարխուդարյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1967, 218 էջ:

Դիվ. IV – Դիվան հայ վիմագրության, պր. IV, աշխ. Ս. Բարխուդարյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1973, 384 էջ:

Դիվ. V – Դիվան հայ վիմագրության, պր. V, աշխ. Ս. Բարխուդարյանի, ՀՍՍՀ ԳԱ հրատարկչություն, Երևան, 1982, 274 էջ:

Դիվ. VI – Դիվան հայ վիմագրության, պր. VI, աշխ. Ս. Ավագյանի և Հ. Ջամփոլադյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարկչություն, 1977, 223 էջ:

Դիվ. IX – Դիվան հայ վիմագրության, պր. IX, աշխ. Ս. Բարխուդարյանի, Կ. Ղաֆադարյանի, Ս. Սաղումյանի, Երևան, «Գիտություն» հրատարակչություն, 2012, 501 էջ:

Դիվ. X – Դիվան հայ վիմագրության, պր. X, աշխ. Ս. Բարխուդարյանի, Երևան, «Գիտություն» հրատարակչություն, 2017, 211 էջ:

Եղիազարյան Ա. 2021, Սմբատ Բ Տիեզերակալ. թագավոր հայոց, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 140 էջ:

Թումանեան Լ., Յակոբեան Հ. 2022, Ախթամարի մի վիմագրի վերծանման շուրջ, «Սիոն», , հ. 1-3, էջ 100-104:

Հարությունյան Ս. 1975, Անեծքի եւ օրհնանքի ժանրը հայ բանահյուսության մեջ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարկչություն, 269 էջ:

Հարությունյան Ա. 2016, Վաղարշապատ. վանքերը և վիմական արձանագրությունները, Ս. Էջմիածին, 548 էջ:

Հարությունյան Խ. 2019, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, Մատենադարան, 430 էջ:

Հարությունյան Խ. 2022, Հայերեն ձեռագրերի հիշատակարանների լեզուն (Թ-ԺԵ դարեր), գր. Ա, Երևան, Մատենադարան, 399 էջ:

Հիշ. Ե-ԺԲ – Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. Ե-ԺԲ դար, աշխ. Ա. Մաթևոսյանի, Երևան, Մատենադարան, 1988, 366 էջ:

Հիշ. ԺԳ – Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար, աշխ. Ա. Մաթևոսյանի, Երևան, Մատենադարան, 1984, 987 էջ:

Ղաֆադարյան Կ. 1948, Հովհաննավանքը և նրա արձանագրությունները, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 120 էջ:

Ղաֆադարյան Կ. 1975, Երևան. միջնադարյան հուշարձանները և վիմական արձանագրությունները, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 252 էջ:

Մաթևոսյան Կ. 1987, Արուճ, Երևան, «Հայաստան», 93 էջ:

Մալխասյան Մ. 2020, Ժողովրդագրական գործընթացները Հայաստանում 16-րդ դարում և 17-րդ դարի առաջին կեսին, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 299 էջ:

Մանանդյան Հ. 1977, Երկեր, հ. Գ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 504 էջ:

Մարգարյան Հ. 1996, Ռազմաքաղաքական տեղաշարժերը Մերձավոր արևելքում և հայ ավատատիրական ավագանին ԺԲ դարում – ԺԴ դարի առաջին կեսում, ատենախոսություն պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի համար, Երևան:

Մարգարյան Հ. 2005, Բագրատունի թագավորների «տիեզերակալ» տիտղոսը, «Հայագիտության հարցեր», էջ 98-109:

Մուրադյան Կ. 1983, Գրիգոր Նազիանզացին հայ մատենգարության մեջ, Երևան, 262 էջ:

Մուրադյան Կ. 1992, Գրիգոր Նազիանզացու «Յաղագս աղքատասիրության» ճառի հայերեն թարգմանությունը, «Էջմիածին», թ. Ա-Գ, էջ 102-140:

Յակոբեան Ա. 2020, Արքայատոհմերն ու իշխանատոհմերը Բուն Աղվանքում եւ Հայոց Արեւելից կողմանքում Անտիկից մինչև ԺԳ դար, Երևան, «Գիտություն» հրատարակչություն, 439 էջ:

Յովսէփեան Գ. կթղ. 1969, Խաղբակեանք կամ Պռոշեանք հայոց պատմութեան մէջ, Անթիլիաս, 523 էջ:

Սարգսյան Գ. 1957, Կապտավանք, Էջմիածին, թ. 2-3, էջ 52-58:

Սարգսյան Գ. 1977, Արձանագրություն Թեղենյաց վանքից, «ԼՀԳ», թ.8, էջ 100-107:

Սարգսյան Գ. 2021, Նորահայատ վիմագիր Արտավազավանքից, Երևան, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հրատարակչություն, 79 էջ:

Սոկրատ Սքոլաստիկոս 1897, Եկեղեցական պատմութիւն, աշխ. Մ. վրդ. Տէր-Մովսիսեանի, Վաղարշապատ, Տպարան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, 834 էջ:

Սուքիասյան Ա. 1978, Կիլիկյան հայկական պետության և իրավունքի պատմություն, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 390 էջ:

Ներսես Լամբրոնացի 1865, Ատենաբանութիւն եւ թուղթ եւ ճառք, Վենետիկ, Ս. Ղազար:

Տեր-Պետրոսյան, Լ. 2007, Խաչակիրները և հայերը, հ. Բ, Երևան, 672 էջ:

Ուլուբաբյան Բ. 1975, Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն 454 էջ:

Քալանթար Ա. 2007, Հայաստան. քարե դարից միջնադար, Երևան, «Գիտություն» հրատարակչություն, 408 էջ:

Бартикян Р. 1988, О византийской аристократической семье Гаврас, «ИФЖ», н.1, с. 163-178.

Бархударян С. 2011, Страницы из истории Арцаха и армяно-албанских отношений, ред. А. Акопян и К. Асатрян, Ереван, издательство «Гитутюн», 175 с.

Ahrweiler H. 1975, L'idéologie politique de l'Empire byzantin, Paris, Presses universitaires de France, 149 p.

Bosworth C. E., Savory R. M., "AMĪR-AL-OMARĀʾ," Encyclopædia Iranica, (էլ.-տարբերակ) [http://www.iranicaonline.org/articles/amir-al-omara]

Dowsett C. 1971, A Twelfth-century Armenian Inscription at Edessa, in Iran and Islam, ed. C. E. Bosworth, Edinbourgh, Edinbourgh University Press, p. 197-227:

Gautier P. 1964, Jean V l'Oxite, patriarche d'Antioche. Notice biographique, "Revue des études byzantines », pp. 128-157.

Gregorius Theologus 1857, De Pauperum Amore, «Patrologia Graeca », t. 35, pp. 858-910.

Mutafian C. 2012, L'Arménie du Levant (XIe-XIVe siècle), Paris, Les belles lettres, 1152 p.

Rüdt-Collenberg W. H. 1963, The Rupenides, Hethumides and Lusignans, Paris, 89 p.

Socrates Scholasticus 1864, Historia Ecclesiastica, «Patrologia Graeca », t. 67, pp. 30-842.

Sutherland J N. 1975, The Mission to Constantinople in 968 and Liudprand of Cremona, "Traditio", 31, pp. 55-81.

Zagklas N. 2019, "How Many Verses Shall I Write and Say?": Poetry in the Komnenian Period (1081–1204), A Companion to Byzantine Poetry, ed. W.Hörandner, A. Rhoby, N. Zagklas, Leiden/Boston, "Brill", pp. 237-263.